ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

8 հունիսի 2017 թվականի N 61-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՎՃԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԱՐԵԿԱՆ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 49-րդ և 68-րդ հոդվածներով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2011թ. մարտի 3-ի «Պետության սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող առևտրային կազմակերպությունների շահույթի բաշխման, շահութաբաժինների հաշվարկման և Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի դեկտեմբերի 5-ի N 1194 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 202-Ն որոշմամբ հաստատված կարգը,

ո ր ո շ ու մ ե մ.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի ենթակայության առողջապահական փակ բաժնետիրական ընկերությունների կողմից 2016 թվականի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքներով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման ենթակա տարեկան շահութաբաժինների չափը՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի ենթակայության փակ բաժնետիրական ընկերությունների տնօրեններին՝ մինչև 2017 թվականի հոկտեմբերի 1-ը սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարել շահութաբաժնի առկա պարտավորությունը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Վ. ՀԱԿՈԲՅԱՆ

2017թ. հունիսի 8
ք. Կապան

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզպետի
2017թ.հունիսի 8 -ի N61 Ա որոշման

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի ենթակայության առողջապահական փակ բաժնետիրական ընկերությունների 2016 թվականի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքներով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման ենթակա շահութաբաժինների գումարի չափը

ՀՀ	Ընկերության անվանումը	Վճարման ենթակա շահութաբաժնի գումարի չափը (հազ. դրամ)
1	«Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ	370.0
2	«Քաջարանի բժշկական կենտրոն» ՓԲԸ	120.3
3	«Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ	248.4
4	«Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ	586.5
5	«Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» ՓԲԸ	108.0
6	«Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր» ՓԲԸ	56.0
7	«Սյունիքի մարզային արյան փոխներարկման կայան» ՓԲԸ	75.0

ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար **Ռ. Սարգսյան**